ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի[1] վերաբերյալ նկատառումները ներկայացված են ստորև.

1. Նախագծի տարբեր հոդվածներում միևնույն հասկացությունը բնորոշելու համար կիրառվում են տարբեր եզրույթներ, ինչը հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին: Մասնավորապես.

Ա.Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի[2] 1092-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն գլխի կանոնները կիրառվում են անկախ այն բանից՝ անհիմն հարստացումը *ձեռք բերողի*, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:»: Միաժամանակ, Նախագծի որոշ հոդվածներում կիրառվում է «*հարստացած անձ*» տերմինը, իսկ Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 1098-րդ հոդվածում «*ձեռք բերող*» բառերը փոխարինել «*հարստացող*» բառով:

Բ. Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 1094-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Անհիմն հարստացած անձը կարող է գույքը փոխանցելու փոխարեն տուժողին վճարել *դրա արժեքը*, եթե գույքը վերադարձնելը ոչ խելամիտ ջանքեր կամ անհամաչափ ծախսեր կառաջացնի հարստացած անձի համար:»: Իսկ Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող՝ Օրենսգրքի 1095-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «դրամական արժեք» տերմինը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն

[1] Այսուհետ՝ Նախագիծ
[2] Այսուհետ՝ Օրենսգիրք

միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Ուստի, Նախագծում միատեսակ տերմինների կիրառումն ապահովելու նպատակով առաջարկում ենք վերոնշյալ հոդվածներում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ